Ա. ՏԱՐԻ, Թիւ 38 — 26 ՄԱՅԻՍ 1900, ՇԱԲԱԹ, ՈՒՍՏՐ, — MAY 26 VOL I No. 38

ԲԱԺՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՄԱՐ
Տարեկան $1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր։

ԳԻՆ 3 ՍԷՆԹ։

ՁԱՅՆ Հայրենեաց

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ
AN ARMENIAN WEEKLY.
16 MECHANIC STREET,
WORCESTER, MASS.

ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at Worcester, as Second - Class Mail Matter.

Subscription $1.50 a Year.

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ

Ըսած ենք ու կը կրկնենք թէ, մենք Պ. Արփիարին փաստաբան կանգնելու դերը չըպիտի ըստանձնենք։

Ա. Մենք բոլոր ջանքերնիս պիտի թափենք պատուոյ ատեանի կազմութեան խնդիրը յաջողցունելու. ուր Պ. Արփիարին ինքզինքը արդարացունելու պատեհութիւն տրուի։

Բ. Մենք կուզենք որ Պ. Արփիար չեղոք ատեանի մը առջեւ դատուի եթէ մեղապարտ է, անաչառ և օրինական ատեան մը դատապարտէ զայն, ու մենք եւ մեզի հետ ամբողջ հայ ժողովուրդը ճանչնայ անոր մեղապարտութիւնը։

Գ. Մենք չենք ուզեր մեր գլխէն մազ մը իսկ զոհել դաւաճան ճանչցուած որև է անձի համար. եթէ նոյն իսկ մեր աչքին լոյսը եղած ըլլայ. ընդհակառակը անոր անողոք դահիճը ըլլալու ոգին ունինք։

Դ. Մենք չենք ուզեր որ ամենահետնեալ համարուած ազգային մը իսկ. դաւաճանի ամբաստանութեան տակ մեռցուի բարոյապէս. մութի մէջ սարգուած ոխակալ դաւերու զոհ ըլլալով։

Մեր բռնած այս դիրքին կուռանը կը կազմեն հասարակաց ապահովութիւնը. յեղափոխութեան բարոյականը եւ արդարութեան սէրը։

Արդ թող ըսուի թէ,

Ա. Ինչո՞ւ ընդդիմադիր կուսակցութիւն մը իր բոլոր արբանեակներով ոգի իբրեւ ամէն ճիգ կը թափէ պատուոյ ատեանի կազմութիւնը անյաջողութեան մատնելու։

Բ. Ինչո՞ւ հակառակորդի յայտնի անունին տակ գտնուող կուսակցութիւն մը, շոր, անկապ, անվաւեր ու հակասական խօսքերու քաոսային ամբաստանագրով մը կը պահանջէ որ, իր ամէն օրինական սահմանի դէմ եղող սոսկալի մէկ վճիռը՝ ազգին կողմանէ ընդունուի իբր ինքնայայտ ճշմարտութիւն։

Գ. Ինչո՞ւ կը բողոքենք թիւրք կառավարութեան դէմ, որ բաղդատմամբ Դաշնակցականներու Պ. Արփիարին դէմ բռնած դիրքին, շատ աւելի օրինական ձեւակերպութիւններով՝ ամէն ամբաստանեալի ինքզինքը պաշտպանելու պատեհութիւն կուտայ. երբ յեղափոխական կուսակցութիւն մը թիւրքէն աւելի արդարախոհութիւն ցոյց չտար, ալ ի՞նչ բանի մէջ է անոր արժանիքը։

Դ. Դաշնակցականները ինչ վնաս կը տեսնեն դատելու կարող, չեղոք և վստահելի անձերէ կազմուած պատուոյ ատեանի մը մէջ, որուն առջեւ դրուին ամբաստանող «Տոկումանները» ի քննութիւն։

Ե. Չկա՞ն արդեօք ազգին մէջ հինգ անձնաւորութիւններ, որոց դատելու կարողութեանը և անաչառութեանը կրնայ ազգը վստահիլ, թէ անոնց անաչառ քննութեանը առջեւ դիմանալու կարող փաստեր կը պակսին։ Եթէ վերջինը ճըշմարիտ է, թող քաջաբար խոստովանուի, և անոր ալ մէկ ճարը կը նայինք։

Զ. Ինչո՞ւ Դաշնակցականները սիրահարեն Պ. Արփիարի գրաւոր յայտարարութիւններուն. միթէ ամբոխը, ուր կիրքերը և ագիտութիւնը շոշափելի խաւարը կը տարածեն, աւելի ճի՞շտ կրնայ դատել ու ճշմարիտ եզրակացութեան հասնիլ, քան մէկ ձեռքի վրայ համրուելիք ամենաընտրեալ, ամենակարող և ամենա անկողմնակալ անձնաւորութիւնները. թէ Դաշնակցականները ամէն բան կորսնցունելու վախէն, կը խորհին թէ պղտոր ջուրին մէջ ինչ՝ ձուկ որ բռնեն ա՛յն շահ կը մնայ իրենց։ Դեռ ջուրերը— հասարակաց միտքը բաւական պղտորուած չ՚համարուիր, ո՞րքան ալ պղտորուի նէ Դաշնակցական պարոնները գոհ պիտի մնան։ Ինչո՞ւ չեն փափաքիր որ ժամ առաջ ջուրերը յստակուին։

Է. Ինչպէս Պ. Արփիար կարող պիտի ըլլայ հրապարակագրութիւնով պարզել իր վրայ հրատարակուած ամբաստանութիւնները, որոց օրինաւորութիւնը կամ ապօրինութիւնը, վաւերականութիւնը կամ անվաւերութիւնը, ճշդութիւնը կամ ստութիւնը մութի մէջ կը մնան. եթէ Դաշնակցականները պատրաստ չեն իրենց տոկումանները և ապացոյցները չեղոք ատեանի մը առջեւ դընելու, որուն մէջ պիտի ըլլան իրենց ալ ներկայացուցիչները, արդեօք պատրաստ են դանոնք ներկայացնել Հնչակեան կուսակցութեան ատեանին. եթէ այդ ամբաստանութիւնները ոչ չեղոք ու ոչ ալ կուսակցական ատեանի մը առջեւ դալու շնորհքը ունին՝ եթէ անոնք պէտք է որ թաղուած մնան յաւիտենական խաւարին խորը, ամբաստանեալը ի՞նչ բանի դէմ պիտի արձակէ իր զէնքերը, աչք կապո՞ւկ պիտի խաղցուի, քանի որ այդ ամբաստանութիւնները ինքնին կը գըտնուին շատ աւելի զօրաւոր ամբաստանութիւններու տակ.— քոյր կուսակցութիւն մը զայնս կեղծիք ու զրպարտութիւն կը համարի.. քանի որ անոնց վաւերականութիւնը կասկածելի է և խընդրոյ տակ, քանի որ անոնց հակառակորդներու կողմէն գալը ամէն ոք գիտէ. քանի որ սրև է օրինական սահմանի մէջ անոնց արժէքը ճշտուած չէ, այս անընտուգութեանց քաոսին մէջ Պ. Արփիարին կողմանէ հրատարակուած պաշտպանողականները ի՞նչ արժէք պիտի ունենան։

Հա. Իմացայ, ձայն մը ականջիս կըսէ.— "Արդէն մեր ուզածն ալ այն է որ արժէք չունենայ....,,։

— Թող արժէք չունենան ամբաստանութիւնները, արժէք չունենան ամբաստանեալին հերքումները, թող մէկ կողմը "Դաւաճան,, ու միւս կողմը "Կեղծարար ու զրպարտիչ,, ճանչցուին ժողովուրդէն, թող կրակի և արիւնի մէջ տատանուող հայութիւնը՝ իրարու օձիքէն կախուող յեղափոխականներէն ճար յուսայ, թող այդ "Ազատութեան կարապետ,,ները իրար անուանարկելու կատաղի պայքարը մղելով՝ ժողովրդեան անէծքի ճահիճէն դաբնիներ քաղեն, թող ամէն կողմանէ յուսակտուր՝ նահատակ հայութիւնը եւս առաւել չուարի իր որդեկաց միմեանց միսն ու ոսկորն կրծելու աղմուկը միշտ լսելով, թող մէկզմէկ նախատելու ժխորը շարունակուի....։

Մինչեւ ե՞րբ ...

Անոնք որ պատուոյ ատեանի պահանջին դէմ Պ. Վռամեանի գրած շարք մը յօդուածները կարդացեր են. տեսեր են թէ նա երկու կէտի վրայ կը դառնայ, մին թէ "Մենք ըսածնիս ըսեր ենք, ուզողը թող հաւատայ, չուզողը թող չհաւատայ,, միւսը թէ "Թող Պ. Արփիարն ալ գրէ իր պաշտպանողականները, ուզողը հաւատայ, չուզողը չհաւատայ.—քէյֆի, քմահաճութեան խնդիր է ...։

Եթէ փնտռածնիս խօսքի հերոսութիւն է, Արփիարը ոչ ոքէ վար կը մնայ. իսկ եթէ փաստ կուզենք, ահա չեղոք ատեանը. թող երկու կողմէն իրենց փաստերը հոն բերեն, կտրիճի պէս։

Փափաքելի է որ Պ. Վռամեան որոշակի և ուղղակի պատասխանէ մեր վերի հարցումներուն,

---

Եթէ մեր դրացին գէթ այնքան ինքնահաճութիւն ունենար՝ որ ընդունակ լինէր հայելիին մէջ իր դէմքը ճանչնալու, եթէ իր գրչովը սեւցած խօսքերէն իրեն վայել ու պատկան մասերը իւրացունելու ազնուութիւնը ունենար, պիտի կռահեր թէ ի՞նչպէս և ի՛նչ գէշ կերպով անուանակծէր իր "Գործիչ,, խմբագիրը։

Շնթլցի Վարժապետին երկրորդ հերքմնագիրն ալ զոր ղրկած է մեր Նիւ-Եորքի դրացիին, հրատարակեցինք նոյնութեամբ։ Խեղճ մարդը փորձանքն է ինկեր, փորձանք թղթակիցներու փորձոնք թերթին ձեռքը։ Գիտէ՞ արդեօք վարժապետը, թէ այդ փորձանքը երբէք իր գլխին չպիտի դար, եթէ բարոյապէս սնանկացողները Զիթճեանի անունէն իրենց համար դրամագլուխ մը շինելու կարօտը չքաշէին։

Դրացի թերթը Շնթլցի վարժապետին առաջին հերքմնագիրը անվաւեր համարեց, որովհետեւ անկէ "Կուսակցական հոտ»? առեր էր???։ Այդ սուրբ քիթ ունեցող պարոնները այս երկրորդ հերքմնագրէն ալ անշուշտ ուրիշ հոտ մը կառնեն???։ Արդէն այդ թերթը իր նախորդ խմբագրական տեսութեամբ Շնթլցի վարժապետին հերոսացած խնդրոյն առթիւ յոխորտանօք յայտարարեց, "Մենք վստահ էինք թէ մեր թղթակիցներուն գրածները զուտ իրականութիւն են,,...(?) և թէ "Մեր դեմը գտնուողները.... գիշեր ցորեկ կը մտածեն այլանդակ սուտեր ստեղծել,,....(?) — իրենք և իրենց թղթակիցները զուտ? իրականութիւնը? կը խօսին. իրենց դէմ եղողները միշտ այլանդակ? սուտ? կըստեղծեն?. ալ բան ու գործ չունիս նէ հերքէ....։

Շնթլցի վարժապետին խնդիրն ալ տեսակ մը Արփիարի խնդիր դարձաւ. այսու տարբերութեամբ որ, առաջնոյն խնդիրը թեթեւ է։

Միոյն մէջ կը սիրեն Զիթճեանը նախատել իբր— Եպիսկոպոսին կողմանէ ջանացեր է? մէկը համոզել?? որ տէր տէր ըլլայ???. իսկ միւսին գիտէք։

Եթէ կրցեր այդ տարօրինակ թերթին ընդունել տալ թէ Շնթլցի վարժապետին խնդիրը մի ծիծաղելի ու նենգամիտ խաղ է. այն ատեն յուսայ որ Արփիարի խնդրոյն վրայ ալ ողջամիտ աչքով նային։

Կարնոյ և Բաղէշի նահագներուն մէջ մուրացիկներու ցեղ մը կայ. որ Մթռըպ կը կոչուի։ Այս Մթռըպները աւանդական կրթութիւնով մը վարժուած են այս ու այն անձնաւորութեանց անուններուն վրայ գովասանքի կամ պարսաւանքի ոտանաւորներ (տեսթան) շինել. զանոնք երգելով տուն տուն թափառիլ և մուրալ. իրենց առատ նուէր տուողին շըռայլ գովասանքներ կը ձօնեն, մինչ զիրենք մերժողին անուան վրայ նողկալի նախատինքներ կը կապեն, ու կսկսին ժողովուրդին մէջ մին հրէշտակ ու միւսը հրէշ ներկայացունել։ Կառավարական գաղանասիրտ պաշտօնեայներ գիտեմ, որ Մթռըպներուն բերանը "Ալէմէ տեսթան,, ըլլալու վախէն, անոնց կուտան ինչ որ անոնք ուզեն։

Դժբախտաբար հայերուս մէջ ալ սկսած է ժամանակէ մը իվեր. Մթռըպներու կազմակերպութիւն մը երեւան գալ. որոնք լրագիր հրատարակելով՝ ճիշտ ու ճիշտ Մթռըպներուն զզուելի դերը կը խաղան։ Կրնաս նէ անոնց քմահաճոյքը մի կատարեր. կամ որ աւելի վտանգաւորն է? կրնաս նէ անոնց հակառակորդ հանդիսացիր. ալ ամէն անխըղճութիւնով ու անամօթութիւնով քեզ "Ալէմէ տէսթան,. կը շինեն???։

ԼՕՐԷՆՍ

19 Մայիս 1900

ԶՐՊԱՐՏԻՉ-ԿԵՂԾԱՐԱՐԱՆԵՐՈՒ գործակալները պատուոյ ատեանի յաջողութիւնը ջուրը ձգելու փորձին մէջ անյաջող՝ սկսան հրապարակաւ ցոյց տալ, որպէս թէ պատուոյ ատանի մասին Ամերիկայի բազմաթիւ քաղաքներու մէջ տեղի ունեցած ժողովրդային գումարումները զուտ կուսակցական հանգամանք ունին։ Միևնոյն շահատակութիւնը ընելէ չքաշուեցան Լօրէնսի ժողովի նկատմամբ ալ։ Այսօր ուրախ եմ յայտարարելու թէ. Լօրէնսի ժողովուրդը գնահատելի քաջութեամբ մը կորովի ապտակը կը զարնէ այդ կեղծողներու երեսին։ Ցարդ պատուոյ ատեան պահանջող չեղոք ազգայիններու ստորագրութիւնը հասած է 126 ի։ Ահա թէ ի՛նչ կը նշանակեն այն բոլոր թղթակցութիւնները որոնք Նիւ Եորքի հայատառ թերթին դատարկ սիւնակները կը մրոտեն։ Ժողովրդային մէկ առածը կըսէ, Գող սիրտը դող. պարոններ փախուստի միջոց մի փնտռէք ամէնքս ալ պէտք է խոնարհինք ազգային շահերուն և ժողովուրդի ձայնին հանդէպ՝ մեր փախուստը մեր դատապարտութիւնը պիտի ըլլայ, ճշմարտութիւնը պիտի յաղթանակէ վերջապէս։ Ձեր կուսակցութեան համար վերջացած խնդիրը, ամբողջ ազգին համար վերջացած չի կրնար ըլլար։ Ազգը քննութիւն կը պահանջէ։

***

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ ԵՒ ՆԵՐԿԱՅ ՏԱԳՆԱՊԸ

(Պատրիարքի Վերջին Հրաժարագրի Առթիւ)

(Շարունակութիւն 35 թուէն)

Բ.

Ըսինք թէ Կիլիկեան Օսմանեան երկիր ըլլալէն սկսեալ՝ Կիլիկիոյ «մասնաւոր» կամ «փոքր» Կաթուղիկոսները անուղղակի կերպով ենթարկուեցան Ընդհանրական Հայրապետին, քանի որ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի իրաւասութեան տակ էին Վարչականապէս և Կ. Պոլսոյ Պատրիարքն ալ Ընդհանրական Հայրապետութեան պաշտօնական ներկայացուցիչ Արքեպիսկոպոսն է բոլոր Թիւրքիոյ Հայոց վրայ։

Արդ, թէպէտ Ազգային Սահմանադրութիւնը կեդրոնական վարչութեան իրաւասութիւն տուած էր Սիսի և Աղթամարայ Կաթուղիկոսաց վրայ, և ընտրութիւնն ալ Ազգ. Երես. Ընդհանուր Ժողովին վաւերացման ենթակայ, սակայն դեռ Նորահաստատ Սահմանադրութիւնը շատ խորին գաւառները չէր ազդեր, և այդպէս շատ դիւրին եղաւ Աղթամարայ Տ. Պետրոս «Պիւլպիւլ» Կաթուղիկոսի սպաննուիլը (1864 Սեպտ. 28) իր ձեռնասուն Խաչատուր Եպիսկոպոսի քիւրտ սպասաւորներէն, և վերջնոյս ա, նոր գահը յափշտակելը և բռնի օծուիլը (սպաննութենէն 8 օր առաջ)։ Նոյնպէս Կիլիկիոյ Կաթուղիկոսութիւնը շատ դիւրութեամբ սեփականութիւն եղած էր «Աշապահեան» ընտանիքին, որոնք միշտ եղբայր կամ եղբօրորդի իրարու կ'յաջորդէին՝ տեղական կուսակալներու և պէյերու ազդեցութեամբ։ Աշապահեաններու վերջին շառաւիղը, Նիկողոս վատահամբաւ Եպիսկոպոսը, 1866 Յուլ. 11 ին գիշերով կ'օծուի Յարութիւն անուն. վերջէն Էմին անուամբ տաճկցած-եպիսկոպոսէ մը։

Այ այս խայտառակութիւնները՝ կեդրոնի ուշադրութիւնը... արթնցուցին։ Մատթէոս Կաթուղիկոսն ալ նոր վաղճանած և նորա ընտրութեան օրինական խնդիրն ալ կար. այս ամենուն համար Ընդհ. Երես. Ժողովը «Կաթուղիկոսական խնդրոյ յանձնաժողով մը» կազմէ, որ իր տեղեկագիրը Երես. Ժողովի 1866 Յուլիս 22 ի նստին ներկայացուցածէ։

Այդ տեղեկագրին մէջ կ'խնդրուի Ազգ ընդհանուր Ժողովէն որ Աղթամարայ և Սսոյ Կաթուղիկոսութիւնները «փոխանակ առաջուան նման բարձի թողի ընելու՝ անոնց ներքին բարեկարգութեանը և արտաքին հպատակական յարաբերութեանը հոգ տանի»։ Ազգ. Ընդ. Ժողովը երկու աթոռներն ալ թափուր կ'հռչակէ և նոր ընտրութեան կարգադրութիւն կ'յանձնարարէ Ընդհ. Հայրապետի ընտրութենէն վերջ, (քաղուած Տ. Մատթէոս եպ. Իզմիրլեանի «Հայրապետութիւն Հայ. Եկղ.» գրքէն տպագ. Կ. Պոլիս 1881)։ Օրուան Պատրիարքն էր Պօղոս Թաքիապան։

Շատ մը խառնակ դէպքեր ժամանակ մը կ'յետաձգեն խնդիրը։ Գէորգ Դ. Կաթուղիկոս կ'ընտրուի 1866 Սեպ. 17 ին։ Այդ Ընտրութեան Կ. Պոլսոյ Երես. Ընդ. Ժողովը 130 քուէ ղրկած է երկու հոգւոյ հետ. այդ քուէներու մէջ կային նաև Սիսինը և Աղթամարինը. Արիմեան Հայրիկ ալ 1869 Սեպտ. 4 ին Պատրիարք կընտրուի։

Գէորգ Դ. Կաթուղիկոս սաստիկ հակառակութիւն ցոյց կուտար Սիսի և Աղթամարի Կաթուղիկոսութեանց, զանոնք պարզապէս «Հակաթոռ» կ'համարէր այլ Կ. Պոլսոյ Կեդրոնական վարչութիւնը աւելի շրջահայեաց գտնուելով՝ ուզեց դարման տանիլ զեղծմանց. և յատուկ կանոն մը սահմանել թէ՝ այդ մասնաւոր Կաթուղիկոսութեանց ընտրութեան թէ նոցա ընդհ. Հայրապետի հետ ունեցած առնչութեան (կրօնապէս), և թէ նոցա Կ. Պոլսոյ Պատրիարքարանի հետ ունենալիք յարաբերութեան (վարչական) համար։

1870 ին Երեսփոխանական Ժողովի վեց նիստերը կ'դրաւէ այս խնդիրը (տես նոյն տարուոյ տետեղագր. նիստ Բ.-Է.) վերջապէս Երեսփոխանական Ժողովը սկզբամբ կ'վճռէ որ, Աղթամարի և Սիսի վիճակները ներքին կրօնական և վարչական խնդիրներու մէջ ապակեդրոնացեալ ըլլան, ընդհանուր և բացառիկ կրօնական խնդիրներու մէջ ընդհանրական Հայրապետութեան ենթակայ, իսկ վարչական ընդհանուր և կեդրոնական խնդիրներու մէջ ենթակայ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի։ Տեղական Կաթուղիկոսաց ընտրութիւնն ալ տեղական Ժողովուրդի պատգամաւորները կատարեն, տեղւոյն վրայ, կեդրոնական վարչութեան հրահանգովը, և Երեսփոխանական Ընդհանուր Ժողովը Ընդրութիւնը վաւերացնէ՝ ըստ Ազգ. Սահմանադրութեան։ Այս վճիռը իրրեւ օրէնք կ'ընդունուի և կանոնագիր մը գծելու համար յանձնախումբ մը կը կազմուի։— Իսկ Նիկողոս Եպ. Կիլիկիայէն Պոլիս բերել կը տրուի և Արմաշի վանքը կ'աքսորուի։ *

Օրուան վարչութիւնը կ'ձեռնարկէ այդ վճիռը գործադրելու և Բ. դրան դիմելով 1871 ին կ'յաջողի կայսերական հրովարտակով հաստատել Երեսփոխանական Ժողովի որոշումը, (այս իրաւէն է որ յիշուած է Տ. Օրմանեան Պատրիարքի Վերջին հրաժարագրի մէջ), Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան իբրև «գործադիր տեսուչ» և կեդր. վարչութեան կողմէ ներկայացուցիչ և նախագահ «գաւառական ընդարական Ժողովի», նա եւ Յովհաննէս Ֆրէնկեան, կ'ղրկուին Ատանայ, Բ. դռնէն ալ «հսկող պաշտօնեայ» մը կ'առնուն հետերնին (Լեպիպա էֆ)։ Ասոնք Ատանայի մէջ 1871 Հոկտ. 21 և 22 ին «գաւառական կրօնական Ժողովի երկու նիստերում վեց ընարելեաց ցանկ մը կ'կազմեն և հեռագրով կ'հաղորդեն Կ. Պոլսոյ Կեդր. Վարչութեան, որ Հոկտ. 26 ին անոնցմէ երկուքը ջնջելով (Խրիմեան և Եսայի Պատրիարքներունը) հեռագրով կ'վերադարձնէ. Այդ քառանուն ցանկին վրայ (Մկրտիչ Եպկ. Մարաշցի. Ներսէս Եպկ. Վարժապետեան և Սիմէօն Եպկ. Սէֆէրեան) 1871 Հոկտ. 27 ին Մկրտիչ Եպկ. Մարաշցի, Բերիոյ առաջնորդը 35 պատգամաւորներու 28 ին քուէովը Կիլիկիոյ Կաթուղիկոս կ'ընտրուի և հեռագրով կ'հաղորդուի Կ. Պոլսոյ Կեդր. Վարչութեան որ Երես. Ժողովը վաւերացնէ։ 1871 Նոյ. 12 ի Երեսփ. Ժողովը կ'վաւերացնէ այդ ընտրութիւնը և հեռագրով կ'հաղորդեն Ատանա։ Նոյ. 28 ին ալ կ'օծուի Տ. Մկրտիչ Կաթուղիկոս։

Ահա ընտրութեան այն ձեւը՝ որ օրէնք եղած է և ընդունուած ալ էր՝ մինչեւ ցարդ՝ Տաճկական կառավարութենէն։

Կարծեմ թէ ընթերցողին համար հետաքրքրական էր գիտնալ այդ կարգի մանրամասնութիւնները, անցեալին հրմտանալով ներկայ տագնապին վրայ համոզում դոյացնելու համար։

Յաջորդ յօդուածով պիտի ջանամ ուրուագծել այն դաւերը զորս սկսաւ լարել Տաճկի կառավարութիւնը, սկիզբէն ի վեր, երբ Կիլիկիոյ Կաթուղիկոսութիւնը սկսաւ նշանակութիւն ունենալ, երբ հայք աւելի սերտ կապերով ամրանալ սքսան Ընդհ. Հայրապետութեան հետ և երբ Ռուս կառավարութիւնը, Ընդհ. Հայրապետութեան իւր հողին վրայ գտնուիլը սկսաւ շահագործել ի նպաստ իւր աշխարհակալական քաղաքականութեան։

Տաճկական դաւերը սկսան նոյն իսկ Մարաշցի Մկրտիչ Կաթուղիկոսի պաշտօնի առաջին օրէն, նոյն իսկ այդ Կաթուղիկոսի միջոցաւ և գործակցութեամբ։

Դժբաղդաբար Մկրտիչ Մարաշցի, Կիլիկիոյ նախկին Կաթուղիկոսը՝ տխրահռչակ եղաւ այդ և ուրիշ շատ մը վնասակար գործերու մէջ, և եթէ չ'յաջողեցաւ իսկ, ինչպէս պիտի տեսնենք յաջորդիւ, դէթ կրցաւ իւր միջոցաւ ցանուած սերմերը աճեցնել Տաճկական քաղաքականութեան մէջ և այսօրուան տագնապին հասցնել։

(Շարունակելի)

ՄԱՇԹՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ

ՖՐԷԶՆՕ 7 Մայիս 1900

Տէր.

Արդարութեան անունով կը խնդրեմ որ անկիւն մը չնորհէք ձեր պատուական թերթի մէջ հետեւեալ բողոքիս։

Նիւ Եորք հրատարակուող Հայրենիք լրագրին 50 րդ. համարին մէջ Վ. Մ. Զ. ստորագրութեամբ յօդուած մը գրուած էր քաղաքէս, որ իբր թէ՝ Պ. Արփիարի դէմ իմ վկայութիւնս կը բերէր, Միացեալ Ընկերութեան 40 ոսկւոյ ծանօթ խնդրին համար։

Իրաւ է թէ՝ այն թուականներուն ես ալ գտնուելով յիշեալ ընկերութեան մէջ ինձ ևս ծանօթ է այդ խնդիրն և երբ «բարեկամական շրջանակի մէջ» եղած խնդրանաց անսալով կը պատմէի գիտցածս, սա եզրակացութեամբ վերջացուցի թէ՝ «Պ. Արփիարի նկատմամբ եղած այդ ամբաստանութիւնն եթէ մեղմացուցիչ պարագաներ չունենայ ալ, դարձեալ Պ. Արփիար արժանի չէ այդ ասուիճան դատափետուելու և պախարակուելու. որովհետեւ Պ. Արփիար իւր բոլոր թերութիւններովն հանդերձ շատ աւելի օգտակար եղած է Ազգին համար 30 տարիէ ի վեր, իբրև հրապարակագիր եւ իբրեւ գրագէտ, քան այն գործիչներն որոնք լոկ անձնասիրական ու շահախնդրական դիտումով դաշոյն ու հրազէն տուին միմիտ ու անձնուրաց պատանիներու ձեռք՝ սպաննելու համար անկեղծ ու ճշմարիտ ազգասէրներ՝ այդ անձինք նախ մաքրելու են կերեկցեանի, Արամեանի և նմաններու անմեղ արիւններն իրենց ճակատէն և ապա ելլալու են քարկոծել այս և այն»։

Յօդուածագիր Վ. Մ. Զ. նոյն միջոցին համամիտ գտնուեցաւ ու ինձ հետ ձայնակցեցաւ մեղադրելու Պ. Արփիարն ամբաստանողներն, այժմ երբ կելլայ ըստ հաճոյս ԱՅԼԱՅԼԵԼՈՎ հրատարակութեան կուսայ զայն՝ առանց իմ հաւանութիւնս ստանալու, իրաւունք կուտայ ինձ խորհիլ թէ պարկեշտ և ուղղամիտ անձ մը ըլլաէ հեռի կը գտնուի։

Յ. Մ. ՆՇԻԿԵԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Բարանդուղ 1900 Մարտ 18

Շարունակութիւն նախորդ թուէն

Այս Քահանայի դէմ ունեցած զայրոյթս և ատելութիւնս քառապատկեցաւ երբ նորա խաչագողութեան մի քանի պատմութիւնները լսեցի այս գաւառի ծերունիներից, մանաւանդ Սուլի դրժ՝ բաղտութիւնների մատնուած հայերի պատմութիւնները. որոնք ժամանակին իրենց վիշտերը յայտնել են, խնդրել նուիրակ քահանային սուր որ պէտքն է. սակայն նա իւր շահու աղրիւրը չը նուազելու միակ (չար և աններելի) նպատակով համոզել է ժողովրդին որ լուռ մընան, դանդատ չանեն գիւղատերերից. Դաւրէժի և այլ վայրերու հայոց վիճակից աւելի վատ ու չինծու լուրեր հաղորդելով, «Տէր բարոյ, նօքեարդ էլնես ենք, կնիկներս ուզես են. հարսներս ու աղջիկներս ուզես են, հինգ թախկայ թէ ուշանան, կաշիներն հանես են, էլ ինչխ դիմանանք», պատասխանում է՝ «մեղրաշուրթն քահանայ նուիրակը, «Որդիներ. դուք մեղանից աւելի լաւ օրի էք. մեզի էլ են անում շատ բաներ, որ չեմ կարողանում պատմել», միրուքը բռնում է, և յետոյ՝ «օրհնածնե՛ր, չեմ կարող ամբը պատմել. խոստովանքնե՛ր եմ լսե՛լ, որ մարդի ծամերն թափվում. բաս ի՞նչի էսէնց թոռոմել եմ. (ձեռք տանում է դէպի երեսները), ախր Աստուած պատ՝ ժել է մեզ էն անօրէններով, պէտքա համբերել, պէտքա հնազանդիլ նրանց, դուք չէք իմանում, սուրբ գիրքն էլ էնէնցա հրամայում»։ Էլ ինչ եմ իմանում, Յաստաւուրքից, հարանց վարքից ու մուժամբարի զահրումահրներից մասալաներ ասելով միամտացնում է միամիտ գիւղացիներին որ ձայն չը հանեն, ոչ ոքի չը պատմեն իրենց նեղութիւնները։ Այսպէս էլ Միանդարցիք և ուրիշները պատմել էին Դաղեանց Խաչիկ վարդապետին և ընկերներին, որոնք թէև ոչ նուազ քան հարստարիչները, բայց մօտից շոշափելով թշուառ ժողովուրդի վէրքերը, անէծքներ էին մխրտում դէպի Մուժամբարցու արարքները, բայց մեզ անհաւատալի էին թուում նոցա պատմած այս օրինակ Մասալաները, համարելով Դաղեանցին և իւր հետեւորդներին փչացած անձնաւորները։

* *

Ապրիլ 2 Ուրմի

Երեք օրերից ի վեր պատոյից վերադառնալով յՈւրմի քաղաք. ծանրաբեռնուած ենք գիւղական հայ ժողովրդի արիւնալից վիշտերով ու տառապանքներով, այս տեղումն էլ լսեցինք Միանդարգաւառակի սոսկալի արկածի լուրն թէև մանրամասնութիւնները յայտնի չեն մեզ, միայն պատմում են թէ քսանից աւելի գիւղերը զոհ գնացել են. որոց մէջ գտնվում են և բաւականաչափ հայեր։

Երկու գիշեր է որ այստեղ սոսկալի փոթորիկներ են բարձրանում, երէկ գիշեր քաղաքիս բնակիչներից շատերը երկիւղից դուրս փախան տներից, փոթորիկների սաստկութիւնից։

Երեք օր առաջ քաղաքիս նորեկ դատաւոր Միրզա-Ալիաքբար Շահ զատէն մուներիկ կանչել տուաւ հասարակ ժողովրդի զէնք գործածելու իրաւունք չունենալու համար, ինչպէս երեւում է այս գործումն էլ Ռուսական մի խաղ կայ խաղալու։ Լուր կայ որ Պարսից սահմանի վրայ բնակող քիւրդերից էլ պիտի հաւաքեն բոլոր զէնքերը. բայց թէ Պարսիկ կառավարութիւնը պիտի Լարենա՞ այնքան ուժ իւգործ դնել առանց արտաքին օգնութեան, ինչպէս մաքսային գործում յայտնի եղաւ, իմ կարծիքով այս արգելքը միայն պիտի գործադրուի Ասորի և Հայ ազգաբնակչաց վրայ, ուրիշ ոչինչ. վասն զի Պարսկաստանում ով համարձակում է Սէյիդներուն արգիլել զէնք գործածելու. անթոշակ ու քաղցած սարբազնե՞րը, որոնք մի Սէյիդի հրամանն աւելի գերադաս են համարում քան բարձրագոյն իշխանութեանց հրամանները, որպիսի հրամանները հարիւրաւոր տարիներից ի վեր միայն արձանագրուած են մնացել Պարսիկ կառավարութեան տօմարներում։

Այվատեան Եպիսկոպոսկ Սալմաստից վերադարձել է ի Թաւրէզ բաւական հարուստ աւարով, իւր իսկ խորհրդականներից քանիսն յայտնեցին թէ մօտ 5-600 թուման փող հաւաքեց Սալմաստից ուղղակի կամ անուղղակի միջոցներով։ Որովհետև Ուրմի գաւառում փող ծախսելուց իբաց ուրիշ որև իցէ արդիւնքների սպասելիք չունէր Սրբազանը, հակառակ տառապեալ հայ ժողովրդի յոյսերին՝ մի գործակալ ուղարկելով տեղս իւր նուիրական պարտիքը կատարած է համարեր իրա կարծիքով, նորեկ գործակալ Արժ. Տէր Գէորգ քահանան մի կրթեալ անձնաւորութիւն է. պատիւ ունեցել եմ քանիցս տեսնուելու նորա հետ՝ բայց ինչպէս երեւում է՝ նա էլ իւր նախորդի ցաւալի վիճակին պիտի ենթարկուի, չունենալով այս գաւառում ոչ մի ապրուստի աղրիւր և ոչ էլ բնակելու վայր. խեղճ քահանան ինչ մի ամիս է որ տեղն է հասել՝ օր մէկի տուն ու մի գիւղ է գնում, գրէթէ իր անձնականից ծախսեր անելով. ի՞նչ պիտի լինի իւր ու յուսահատ ժողովրդեան վաղճանը, ինքն էլ չի իմանում, չի իմանում և թեմական Սրբազանը. որովհետև իւր անխորհուրդ արարքներով աչքից ինկել է թէ ժողովրդից և թէ Վեհափառ Հայրիկից։ Ինչպէս իւր մի նամակով խորհուրդ էր տուել գործակալ Տէր Հօր, որ իր կողմից մի ընդարձակ տեղեկագիր ուղարկէ Ուրմիի վիճակից առ Վեհափառ Հայրն, իւր ու ժողովրդի ներկայ դրութեան դարման խնդրէ, որպիսի տեղեկագրեր աւելի ընդարձակօրէն ուղարկել էր արդէն իւր նախորդ գործակալը թէ առ Վեհափառ Հայրիկ և թէ առ ազգային լրագիրս

(*) Աշապահեանց այս վերջին ճուտը, վերջապէս 1876 ին դրաւոր կերպով իւր իրաւունքէն (՛) կ'հրաժարի և վերջէն Ատանա վերադառնալով 1880 ին հոն կը վաղճանի։

Ռուսաստանի· բայց արդիւնքն նոյնը մնաց ինչ որ է ցայսօր։ Է՛հ, ո՞վ է ուշադրութիւն դարձնող այս կողմերի եւ ինկած ու անառնային վիճակի ենթարկուած հայ ժողովրդի վրայ։ Ամիսլքարակի արկածեալներին օգնութեան հասու ու տակաւին կը շարունակուի օգնութիւնները, իսկ Միանդարի թշուառների վիճակից ո՞վ է գրող, ո՞վ է դիտութիւն հրաւիրողը· և արդէն յիշեալ խուլ անկիւնից մինչեւ լուր հասնի հարկ եղած վայրերը, ողջ մնացածներն էլ պիտի կոտորուին քաղցածութիւնից ու անտէրութիւնից։ Ո՞վ դժբաղդութիւն է ունեցել Պարսկաստանի եւ ինկած գաւառները տեսնելու, նա միայն կարող է գաղափար կազմել սոցա ներկայ անտանելի դրութեան վրայ։ Միայն ընութեան հարուածը չէ որ կրում է Պարսկա-Հայը, ուրիշ շատ հեղեղներ էլ կան՝ որոնք ըսպառում են սոցա գոյութիւնը· խիստ անսիրտ մարդ պէտք է լինի որ նկատէ սոցա կեանքն ու անտարբեր մնայ։

(Շարունակելի)

Ն· ԵՐ·

ՄԵԾ ԴԷՊՔ!

Հասարակ Մահկանացուս իմ հասարակ խելքէս վեր ու անհասանելի բաներու շատ կը հանդիպիմ և իւրովի կը բացագանչեմ, «հէքմէ՛թ, հէքմէ՛թ, հէքմէ՛թ...»։ Հաւատա՛յ հրաշքի դարու մէջ կապրինք, ասկէ ետքը եթէ ըսեն կորեկը սիւնն իվեր ու կրիան ծառը կելլեն· ա՛լ, ա՛լ, ա՛լ, Սուրբ Սարգիս վկայ, կը հաւատամ։

Որո՞ւ խելքէն ու մտքէն կրնար անցնիլ որ օր մը Նիւ Եորքի հայերը Խադ Վարդապետին տեղ ուրիշ մը պաշտօնի կանչեն.— մի ըսէք, մի ըսէք, հիմա երկինքը վրանիս կը փլի—։

Բայց աչքերո՞ւս հաւատամ թէ գրերուն· անցեալ օր Նիւ Եորք հրատարակուող (հայերէն ինք) թերթին առաջի երեսին առաջին սիւնակին ճակատը կարմիր մելանով տպուած կրակ ու բոց յայտարարութիւն մը կարդացի, ի յաղթութիւն և ի փառս սոյն թերթին և անոր Խադ Վարդապետին դէմ մղած կռիւներուն, «Խադ Վարդապետ կը պարտուի, ու անոր տեղը կընտրուի Ղեւոնդ Վարդապետ իբր քարոզիչ Նիւ Եորքի»—, Տաճկաստանի մէջ «Արեւը կը ծագի և ամպերը անձրեւ կը թափեն ի-շնորհս բարեխնամ Սուլթանին», կըսէին չէինք հաւատար· հիմա աչքերովնիս տեսա՞նք անկէ աւելի սխրալին։ Տեսանք հրաշքը, հաւատամ և խոստովանիմ· շատ հէքմէթներ կրնան պատահիլ եղեր։ Հեռուեւալ սխրալի զուգադիպութիւնները ինտո՞ր պիտի պատահէին, եթէ անոնց ետեւ կանգնած չըլլար հրաշագործ (հայերէն ինք) թերթը։— Ղեւոնդ Վարդապետ Նիւ Եորք հրաւիրուի քարոզելու, ժողովուրդը սիրահարի անոր տուած քարոզին, այդ օրերը քարոզչական ընտրութիւն տեղի ունենայ, և ժողովուրդին մեծամասնութիւնը իր քուէն այն քարոզչին տայ որուն քարոզին սիրահարած էր—· մարդ իր սիրած բանը ունենալ փափաքի? և զայն ընտրէ՞? աշխարհի համար բոլորովին նոր երեւոյթ չէ՞ այս, զոր կը պարտինք (հայերէն ինք) թերթին։ Բայց հոս ուրիշ բան մ'ալ կայ որ իմ հասարակ խելքէս վեր է· այդ թերթը ինտո՞ր մոռցաւ որ ամիսներ առաջ Ղեւոնդ Վարդապետի համար կը նախագուշակեր թէ «Օր մ'ալ կերթայ կը թրքանայ»· ազգուրաց մը կը նկատէր զայն, ու այսօր անոր Նիւ Եորքի քարոզիչ ընտրուիլը իր «յաղթանակը» կը կոչէ, չէ՞ որ Մեքքէ, Մետինէ երթալու ճամբուն վրայ է Նիւ Եորքը???։

Ուրիշ բան մը լսեցի որ առեղծուածին երեսը կը շրջէ· կըսուի թէ անցեալ երկուշաբթի իրիկուն յիշեալ թերթին «Իմբագրական սպայակոյտը,, ժողովքի կանգներ է եղեր փողոցի մը անկիւնը որոց քովէն կանցնի Խադ Վարդապետ և կը լսէ որ «Սպայապետը,, ոգեւորուած ատենախօսի մը երեւոյթը առնելով, կըսէ «Պաշտօնակիցներ, չէ՞ որ առջի շաբթուն գրեցինք թէ Խադ Վարդապետէն տարբեր կղերականի մը պէտքը ունինք»· չէ՞ որ անկէ ետքը ընտրութիւնը կատարուեցաւ· չէ՞ որ Խադ Վարդապետի տեղ Ղեւոնդ Վարդապետը ընտրուեցաւ· չէ՞ որ այդ մեր ահռելի թշնամին պարտուեցաւ· ուստի գոչենք միաձայն յաղթութիւն! յաղթութիւն! յաղթութիւն!...։

Խադ Վարդապետ հոս միտքը կը դնէ որ այդ "Իմբագրական սպայակոյտ»էն վրէժը լուծէ, ուստի անոնց թերթին 53 րդ· թիւը լոյս տեսածին պէս ցրուուելէ առաջ ամբողջութեամբ ձեռք կը ձգէ·— չէ՞ որ ըսինք հրաշքի դար է —· կը տանի անոնց ամէնքին առաջին երեսին առաջին սիւնակին ճակատն արպուած ուրիշ բան մը քիմիական բաղադրութիւնով ուրել կուտայ և անոր տեղ իր մասին ծանօթ յայտարարութիւնը տպել կուտայ կարմիր գրերով։ Այս ընելուն նպատակն է (ինչպէս ըսինք վրէժ լուծել կուզէր) անոնց բերանը դրուած խօսքերով զիրենք ենթարկել ծաղր ու ծանակի, անոնց թեթեւսոլիկութիւնը· փոքրոգութիւնը· ոխակալութիւնը· սնապարծութիւնը· տխմարութիւնը երեւան բերել իրենց թերթով· իրենց բերանով և այդ կարմիր գրերով...։ Կարմիր գրերով՝ որովհետեւ կարծես տարիներէ ի վեր այդ դէպքէն աւելի նշանակելի ու կարեւոր դէպք պատահած չըլլար հայութեան մէջ, ասով թերեւս Խադ Վարդապետ ուզեց իր անձին ալ չափէն աւելի կարեւորութիւն տուած ըլլալ· ինքզինքը ներկայացունելով մեծ յաղթանակին մեծ առարկան· նշանաւոր՝ շա՞տ նշանաւոր բան...։

Ըսի արդէն ես հասարակ մահկանացու մը եմ, ունեցած խելքս ալ հասարակ է· մեծ գործերու խելքս չի հասնիր, ու երբ կը տեսնեմ, ինչպէս հայերէն ինք թերթին կարմիր յայտարարութիւնը· ուրիշ բան չեմ ըներ բայց միայն իւրովի բացագանչել «հէքմէթ, հէքմէթ, հէքմէթ, հէքմէթ՞...։

Այսքան մը սակայն խելքիս կը պատկի—։

Երբ մէկը ոչինչ բանի մը վրայ խելքէն ելլելու չափ կ'ոգեւորուի, թեթեւսոլիկ է։

Երբ մէկը իրը չեղած արդեան մը վրայ կը պարծի, սնամիտ ու սնափառ է։

Երբ մէկը ազգային որեւէ սխուր դէպքի մը վրայ ցնծութիւն կը կատարէ, իր կիրքը յագեցած ըլլալուն համար, ողորմելիմէ։

ՀԱՍԱՐԱԿ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ

ՊՕՍԹՕՆ 20 Մայիս

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ԹԷ ՑԱԾՈԳԻ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Տիղմի մէջ ինկածները որքան փորձեն դուրս գալու անկէ, աջ ու ձախ դառնալով, այնքան յատակը կը խորասուզին եթէ մանաւանդ մի քիչ ալ ծանրարեռնուած լինին· այսպէս է նաեւ բարոյական ցեխի մէջ տապլտկող ազգերի, ընկերութիւնների, անհատների համար, որոնք կորսնցուցած ամէն ազնուութիւն, ամէն առաքինութիւն և բարոյական ամէն ուժն ու կորովը, ինչքան ալ ճիգ թափեն, գիրենք շրջապատող ցեխերը պեղելու, բարոյական ադտեղութիւնները մաքրելու, առանց, սակայն, իրենց ոտքը ձգմարտութեան և Առաքինութեան հատակին կռուանին վրայ դնել կարենալու, իրենց ջանքերը կը վիժին, միշտ այլասեռումն երեւան կուգայ և զիրենք ծածկող բարոյական տիղմն աւելի կը թանձրանայ։

Այսպէս դժբաղդաբար և մեր մէջ, բարոյական այլասեռումն վարակիչ վէրքի մը պէս օրէ օր կընդարձակէ իւր շրջանը և Ազգայն նկարագիրն ապականող բարոյական տիղմն թանձր խաւով մը կը ծածկէ թուլամպաջիների, Պալտրի-չըփլաքների, կինտօների, Ենիչարիների և այլ և այլ թափթփուկներու մի խմբակը, որը իւր գոյութենէն ի վեր, յեղափոխական դիմակի տակ սրբապղծութիւն, անբարոյականութիւն, ոճրագործութիւն, եղբայրասպանութիւն, դաւաճանութիւն և զրպարտութիւն... իրեն միջոց ընտրած, անընդհատ դէպի նպատակը(!!!) կը դիմեմիշտ աւրել, միշտ ապականել և ամէն տեղը ամայացնել ջանալով....։

Այդ խմբակին ագնիւ միջոցներով հակառակորդների դէմ կռուելու բաց ճակատով և ճշմարտասիրութեամբ իրեն դէմ եղած քննադատութիւններն, ամբաստանութիւններն ու նոյն իսկ «Զբրպարտութիւններ»ը հերքելու կամ ընդունելու վեհանձնութիւնն ու քաջութիւնը անծանօթ են, նեղ ինկած պարագային փաստերը կորսնցուցած!? թուլամպաջիավայել հայհոյանքի տարափ մը կը պոռթկայ միայն հակառակորդների գլխին և ցփռտուքներով ու զրպարտութեամբ մխիթարուիլ կը փորձէ...։

Այդ միևնոյն խմբակն է Դաշնակցութիւն որի «ծուռ բերան» եղող Վառնաի «Հայհոյիչ թերթ»ը երկու տարի առաջ ու անկէ ի վեր երբեմն Սարաջեան Յովսէփ Եպիսկոպոսի Ատրպատականի մէջ արած մատնութեան? փոշկարն հանդի ոսպաւ մի քանի անգամ, այս անգամ Դաշնակցութեան տարօրինակ բերան եղող Նիւ Եորքի չէ օփլիք արապասին որովհետեւ մեր մէջ կան տակաւին ռամիկներ ու միամիտներ, որոնք ամէն տպուած գիրք թէ լրագիր անպայման ճշմարտութիւն և իրականութիւն կը ճանչնան և այդ պարագային չարամիտների զրպարտութիւնները մասամբ մը մտքերը պղտորելու և ժողովուրդի զգացումները խախտելու առաջադրուած նպատակին կը հասնին շատ անգամ, այդ իսկ պատճառով ինձ ծանօթ այն բազմաթիւ անբարոյականութիւններէն միայն վերջին անգամ կրկին հրապարակ հանուած ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ապացուցանելու համար խնդրի իրական պատմութիւնը պիտի անեմ։

Զէօբլիւք-արապասիին մէջ իմիջի այլոց կայ և հետեւեալը։ «... Օրինակի համար կը բաւէ յիշատակել թէ երբ Եպիսկոպոս մը յուդայաբար մատնեց Երուանդ Ղազարեան անուն երիտասարդը Թաւրիզի Ռուս հիւպատոսին, վերջինս իսկոյն ձերբակալել տուաւ ան (ուշադրու թի՛ւն) ու ճամբեց Թիֆլիզ։ Երուանդ Ղազարեան բանտարկուած մնաց միեւնոյն վերջերս և ուր ուրեմն աքսորի դատապարտուեցաւ չենք գիտեր քանի տարուան»։

Լսեցէք, ահա իրական պատմութիւնը։

(Շարունակելի)

ԶԱՒԷՆ

ՓՐՕՖԻՏԷՆՍԻ ՇՈՒՐՋԸ

Հագիւ թէ ժողովուրդին մէջ համեստաշխութեան գաղափարն սկսած էր ամրապնդուիլ և ճիւղեր արձակել, կըսեմ, հազիւ դադրած էր ընկեր ընկերոջ եւ եղբայր եղբօր դէմ մղուած աթոռներու մարան· ու ստացուած Փրօֆիտէնսի այս ներկայ գովելի դիրքն, որ բոլոր մեր ամերիկաբնակ ազգայնոց բարի նախանձը կը շարժէր· և ահա յուզում մը յառաջ եկաւ և ատելութեան ոգին սկսեց գլուխ վերցուցել շնորհիւ մեր ժողովրդի կեանքէն անտեղեակ կրօնախօսի մը։

Մայիս 6 ի կիրակի երեկոյին տեղւոյս հայ աւետարանական եկեղեցւոյ հոգաբարձութեան հրաւիրանօք քարոզ խօսելու եկած էր Սրժ· պատ· Բրօֆ· Յ· Կարապետեան· Նիւթն էր "Բարենորոգմանց սկզբունքներն,,։

Փրօֆ· կարդաց գրաւոր ճառը, որուն մէջ չափազանցութիւններով միասին, ամփոփած էր Հայաստանեայց եկեղեցւոյ բոլոր աւելորդապաշտութիւնները և Հայաստանեայց եկեղեցին Կաթոլիկ և Յունադաւան եկեղեցիներուն հետ հաւասար ըրաւ, որ բոլորովին անտեղի էր։ Փրօֆ· ը կուզէր հասկցունել բողոքական եղբայրներուն, որ Հայաստանեայց եկեղեցին չի վերադառնան· ի միջի այլոց ըսաւ, "Մենք լուսաւորուած բողոքականներս իսկ անոնք... ինչպէ՞ս կրնանք միանալ։ Ոմանք սոյն ժողովը դիսատ ձգելով ելան, ոմանք ալ ուզեցին խառնել։

Ահա հակառակութեան ելէքտրական կոճակն շարժեց, բողոքականի և Լուսաւորչականի վէճերն երեւան ելան, ժողովուրդն յուզուեցաւ ամէն տեղ։ Չորս օր վերջ "մասնաւոր ժողով,, մը վերնագրով յայտարարութիւն մը հրապարակուեցաւ։

Վերոյիշեալ ժողովն բացուեցաւ անցեալ կիրակի երեկոյեան Տօք· Ա· Շահպազեանի ատենապետութեամբ։ Օրսւան խնդիրն երեւան եկաւ, երկար խօսելէն և վիճաբանելէն յետոյ, տեսնելով որ խնդիրն մութի մէջ է, ընդհանուր ժողովն որոշեց որ Փրօֆէսորէն ճառն պահանջէ ի հրատարակութիւն, ժողովն գոցուեցաւ աղմկայոյզ տեսարանով մը, չեմ գիտեր թէ արդեօք Փրովիտէնսի ազատամիտ երիտասարդութիւնն պիտի թողո՞ւ որ այս հակառակութիւնը արմատ ձգէ (*)։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԸ

Նամակ ողղուած "Հայրենիք,,ի

Լօրէնս 20 Մայիս 1900

Շարաթներ առաջ Հայրենիք թերթին թղթակիցին կողմէ անուանս շուրջը դարձած ստայօդ թղթակցութիւնը իմ առաջին բացատրութեամբս վերջացած էր բայց կը ցաւիմ ըսել որ ձեր թղթակիցը իւր անպատկառ ստախօսութեան մէջ այնքան յառաջ կերթայ, այդ խնդիրին համար ձեր թրթակիցը ինձի խօսեցաւ· և ես ըսի ատիկայ կատակ էր և ոչ թէ իրականութիւն, և ոչ ալ այդ մարդիկ ինձի լրջօրէն դիմում ըրած են· բոլորովին զրպարտութիւն է, նաև ձեր գրածը իրողութենէ շատ հեռի է։

Շնթ·ցի Վարժապետ

ԱԶԴ

Յառաջիկայ կիրակի Մայիս 27 Ս· Փ· Եկեղեցւոյ ժամերգութիւնը կըսկսի ըստ սովորականին ժամը 10 ին· Արժ· Տ· Ղեւոնդ Վարդապետ պիտի քարոզէ նիւթ ունենալով "Եկեղեցի արքայութիւն քո,,։

Յետ եկեղեցւոյ պաշտաման երիտասարդաց Քրիստոնէական Ընկերութեան ժողովը տեղի պիտի ունենայ ժողովասրահին մէջ· ուր պիտի կատարուի Դիւանի ընտրութիւն, հետեւաբար կը խնդրուի որ իւրաքանչիւր անդամ անպատճառ ներկայ լինի։

Հոգաբարձութիւն
Ս· Փ· Եկեղեցւոյ

Յառաջիկայ կիրակի երեկոյ Պոստոնի Ազգ· Լսարանի մէջ պիտի ատենախօսէ Գեր· Յովսէփ Եպիսկոպոս Սարաճեան Նիւթ ունենալով·— Աթոռները, անոնց նշանակութիւնը հայ պատմութեան մէջ, իրարու հետ ունեցած յարաբերութիւնները։

Ս. Զ Դ

Մեր գործակալներէն կը խնդրենք որ մինչեւ 36 թիւ մեզ հետ ունեցած հաշիւնին համին փութով մաքրել։

Կը ցաւինք սր նախորդ առաջնորդողի շարունակելին ու կարգ մը շատ կարեւոր թղթակցութիւններու տեղ չուեցանք· և քաղաքականին ալ խիստ քիչ տեղ մնաց։

(*) Նոյն քարոզի մասին երկու շաբաթ առաջ ստացած էինք ուրիշ կարեւոր յօդուած մը· գրուած մեզի շատ սիրելի և վստահելի անձնաւորութեան մը կողմանէ, սակայն որովհետեւ յօդուածագիրը բողոքական չէր, մենք վախցանք թէ մի գուցէ դիւրազգածութենէն չափէն աւելի ազդուած ըլլայ ու Փրօֆէսորին միտքը մասամբ սխալ հասկացած· ու չուզեցինք հրատարակել։ Ներկայ յօդուածը գրողը բողոքական մէկ և յիշեալ եկեղեցին պահելու ամենէն շատ նախանձախնդիր ու զոհաբերող անձնաւորութիւն մը, որուն տրամադրութեանը վրայ սոյն պիսի խնդրոյ մէջ կատարեալ ապահովութիւն ունինք։

Կը գովենք յիշեալ ժողովին խիստ լուրջ ու բանաւոր որոշումը։ Փրօֆեսորին այդ կարեւոր յօդուածին հրատարակութիւնը տեսնել փափաքելի է, որը տեսնելով ըստ այնմ քննադատուի կամ գընահատուի, կարծէ որ այդպիսի նիւթի մը վրայ եղած ուսումնասիրութիւն մը ամէն հայ կարդայ։

ԽՄԲ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մակեդոնիոյ մէջ կրկին ծանր դէպքեր սկսեր են տեղի ունենալ։ Կ. Պոլսոյ Եւրոպական դեսպանները մասնաւոր քննիչներ ղրկեր են Մակեդոնիա, իմանալու թէ արդեօք կարգ ու կանոնը հաստատելու համար թիւրք կառավարութեան ձեռք առած միջոցները բաւական կրնա՞ն ըլլալ թէ ոչ։

Կ. Պոլսէն հեռագիր մը կիմացունէ թէ, Մ. Նահանգաց կառավարութիւնը թիւրք կառավարութեան ուրիշ նօթ մը ղրկած է իր պահանջները գանձելու համար, թէ այս նօթը խիստ ոճ մը ունի։ Թէ Մ. Նահանգաց կառավարութիւնը ալ եւս սպասելու տրամադիր չէ և թէ թիւրք կառավարութիւնը որ կը խորհէր թէ այդ խնդիրը ձգձգելու կամ խպառ թաղելու մտանած էր։ կը տեսնէ որ սըխալերէ ու ինքզինքը շատ նեղ դըրութեան մէջ կըզտայ։

Ծովակալ ահմէտ փաշան որ Մ. Նահանգաց պահանջի խնդիրը ձեռքի տակէ կարգադրելու համար պիտի գար, եկածէ։

ՊԱՏԵՐԱԶՄ

Մեֆքիկը աղատուեցաւ։ որուն վըրայ Անգլիական ժողովուրդին արտայայտած ցնծութիւնը աննկարագրելի է։ այս օր Պատէն Փաուլ, Մեֆքիկը պաշտպանող գնդապետը, պատերազմի մեծագոյն դիւցազունն է։

Պօէրները փախ իփախն սկսեր են կեդրոնական Ճոհաննէսպուրկի և Փրէթորիայի մէջ, ուր զօրաւոր ընդդիմութիւններ ընելու համար մարտկոցներ կը շինեն ու կամրանան։

Լորտ Բոպերթս իր բանակները շարժման մէջ դրեր է, որոց թիւը 100,000 ի կը հասնի և որոց դէմ Պօէրները հազիւ 30,000 ունին։

Պօէրները տեղ տեղ անձնատուր կըլլան։ Տեղ մը 800 մէկէն յանձնուեր են։ Մի քանի հրամանատարներ և Նախագ. Քրուգերի թոռը գերի ինկեր են։

Պօէրներու խաղաղութեան ներկայացուցիչները Ամերիկա եկան, ու տեսնուեցան արտաքին գործոց նախարարին և Նախագահին հետ։ Ասոնց նպատակն է Մ. Նահանգաց կառավարութեան միջամտութիւնը յառաջ բերել, որոց պաշտօնապէս ըսուեցաւ թէ՝ այդ բանը կարելի չէ։

THOMAJANIAN BROTHERS,
52 Southbridge St.,
Worcester, Mass.

Ամերիկաի հայ գաղթականութեան կուգամք յայտարարել, ամէն դիւրութիւն կընծայենք նաւերու տոմսակ տալու մասին։ դէպի թուրքիա կամ եւրոպա։ մասնաւորապէս կը յանձնարարեմք (Ֆրէնչ Լայն) կոչուած գիծն որ ամենապատուական և ամենաարագ նաւերը ունի և ամէն հինգշաբթի առաւօտեան ժամը 10 ին ճամբայ կելնեն Նիւ-Եորքէն։

Դրամ կը փոխադրենք Մարսել հեռագրաւ թէ նամակաւ։ նոյնպէս Եւրոպոյ բոլոր գլխաւոր քաղաքաց մէջ։ որք կը դանձուին առանց որևէ ծախուց և դժուարութեանց։ մեր տան ապահովութեան մասին հայրենակիցք արդէն տեղեակ են, անցեալ 10 տարուան մեր ընթացքէն։ նաև կենաց, վիրաւորուելու, ամենամեծ լաւ ընկերութեանց գործակալութիւնը ըստանցնած եմք։ ասոր համար այ օտարներու դիմելէ առաջ մեզի դիմեցէք։ նամակներու պատասխանները մեր անմիջական ուշադրութեանը կուտամք ինչպէս սովորութիւնէ։

Զգեստավաճառ
ԵՂԲԱՐ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ
52 *Սաուսթհ Պրիճ։ Փողոց*
Ուսթր Մէս

ԿԱՐԻՈՐ ԱԶԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ (Մայսէրի Պաստրմայ) կը պատրաստեմ, գինն է՝ փաուէնտը 35 սէնթ։ վաճառման կեդրոնատեղին՝

Տ. ՍԷՄԷՐՃԵԱՆ
113 TYLER st BOSTON MASS

ԱԶԴ
ԸՆՏԻՐ ՊՈՒԼՂՈՒՐ

Ուստրրի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած ենք մեր յատուկ պուլղուրի գործարանը։ Այդ գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենայաւելագոյնս կը պատրաստենք ընտիր պուլղուր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններովն՝ տանտիկիններու և ճաշարանպետներու գնահատութեան արժանացած է։ Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծեծած և կորկոտ։

Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր և ախորժահամ կերակուրլինելու պուլղուր և ծեծած ունենալ, թող դիմէ ուղղակի մեզ։ Ապսպրանքներ փութով կը կատարուին։ մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել հետեւեալ հասցէին։

Ուստրր, Պուլղուրի Միացեալ Ընկ.
151 *Իւնիրն սթ։, Ուսթրր Մասս։*

Տաճկական տեսակ տեսակ ապրանքներ ալ կը ծախենք։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՆՈՑ ՁԵՌԲԷ ԾԱԽԵԼՈՒ ԵՒ ԱՃՈՒՐԴԻ (ՕՔՇԸՆ)
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՍՐԱՊԵԱՆ

151 *Մէյն Ընթրիթ Ուստր Մէս*

Մենք կը գնենք և կը ծախենք տնական ամէն կարգի կահք և գոյք (Ֆրնիշուր) նոր կամ հին։

Մենք ամէն միջոց ունինք մեր մանաւանդ մեր հայ յաճախորդները գոհացունելու թէ ապրանքին լաւութիւնով և թէ գնոյն ժամանութիւնով։

Դիւրութեան համար ապառիկի դիւրութիւն ալ հաստատեր ենք։ մէկ չորրորդը կանխիկ մնացեալը ամսավճարով։

Ամէն երկուշաբթի առաւօտ ժամը 10½ էն և շաբաթ կէս օրին ժամը 2 էն ետք աճուրդ (օքշըն) ունինք։

Դրսի քաղաքներու ապսպրանքները շուտով ու ճշտութեամբ կը կատարենք։

ԿԱՐԱՊԵՏ Ց. ՓԱՓԱԶԵԱՆ

NEW YORK
LIFE INSURANCE CO.,

ՆԻՒ-ԵՕՐՔ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ *գործակալութիւնը ըստանձնած է, և անձամբ կամ նամակաւ իրեն դիմողները կապահովագրէ ճիշդ և ուղիղպայմաններով։*

Նիւ Եօրք կենաց ապահովագրական Ընկերութիւնը աշխարհի ամենէն մեծ միջազգային ապահովագրական ընկերութիւնն է, 82 կառավարութենէ ճանչցուած և անոնց Օրէնքներով վաւերացուած։

Այս նիւթին վրայ պատրաստած եմ համառօտ տետրակ մը զոր կը ղրկեմ ամեն անոնց, որոնք կը չահագրգռուին այս խնդրով և կը փափաքին որոշ տեղեկութիւններ ստանալ։

G. H. Papazian,
15 Temple Place,
Boston, Mass.

Գործի Լաւ Պատեհութիւն մը

Կուգամ յայտարարել յարգոյ հայրենակցաց թէ Փրովիտէնս 304 Տեն Ընթր. Սափրիչի խանութս կուզեմ ծախել ո՛ր սվհետև ուրիշ խանութ մը բացած եմ եւ չեմ կրնար երկու խանութ բանեցնել։ Այս խանութը 12 տարիներէ իվեր Սափրիչի խանութ եղած է նաև կը վստահացնեմ որ գործը գիտցող սափրիչ մը կրնայ շաբաթական 12 Տօլար շահել։ ծախել ոդիպուած ըլլալով գինը շատ ա՛ժան պիտի ընեմ։ Մանրամասնութեանց համար դիմեցէք առ՝

Պետրոս Պըչաքճեան
724 *Վէսթ-Մինիսթըր Փրովիտէնս*

ԳՈՐԾԻ ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ

Ամերիկեան Կրօսբրի և Պըչըր շափ։ խանութս կը ծախեմ, ուրիշ երկիր մեկնելու պատճառաւ, որպէսզի գնել ուզո՛ղը գործին վրայ ճիշդ և ճիշդ գաղափար կազմէ, շաբաթ մը իրեն պատեհութիւն կը տրուի խանութին մէջ կենալու եւ ամէն բանը հասկնալու որ ատեն անձամբ պիտի իմանայ գործին ինչ շահաւոր ըլլալը։

194 *Պընքրֆիլ ըսթրիտ*
Զարլըսթաուն
Օհան Այվազեան

ՐԱՖՖԻԻ

«ԴԱՒԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Գ հատոր վերջաբանով և «ԿԱՑԾԵՐ» Բ. հատոր լիակատար։

Իւրաքանչիւրի բաժանորդագինն է 5 Շիլին։

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին որպէս «ՍԱՄՈՒԷԼԸ» եղաւ։

Ռաֆֆիի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղղակի դիմեն մեզ։

Մեզնից կարելի է ստանալ նաև Խրիմեան Հայրիկի, Ծերենցի, Պետրոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ։

Հասցէ։

MME. RAFFI,
47 Uxbridge Road,
London, W., England.

ԿՈՒԶԷՔ ԴՐԱՄ ՓՈԽԱԴՐԵԼ

Դիմեցէ՛ք Առ՝

Սարգիս Գ. Սարաֆեան
1060 *Փ. Օ. Պօքս, Ուստր, Մաս։*

Դրամ կը փոխադրենք Թիւրքիոյ բոլոր քաղաքները։ Կեդրոնատեղին է Խարբերդ, Տեար Յովհաննէս Խարբուդլեան, որ երկար տարիներու գործունէութեամբ և վարկով հանրածանօթ է և Կ. Պոլիս Տ. Գէորգ Խարբուդլեան։ Մեր Գործակալներն են։ Մալաթեա Սարգիս Պօնչուդլեան։ Զմշկածակ՝ Մէ՛յրկէ՛յր Ինճէ՛յեան։ Բալու՝ Գարեգին Քիւրէճեան։ Զնքուշ՝ Յակոբ Տաղտիկէլեան։ Թիւրքիոյ ուրիշ բոլոր քաղաքներն՝ալ դրամ կը փոխադրենք Խարբերդի միջոցաւ։

Մարսէյլ թէ հեռագրով եւ թէ նամակով դրամ կը փոխադրենք և նաւային տոմսակներ կուտանք։

Ուստրի մէջ կը վաճառենք պամեսիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ Տաճկական ապրանքներ։

Խանութիս հասցէն է՝ 14½ Արչ Սթ։ Ուստր։ Մաս։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ։— Մեզ դրամ ղրկելու է Մընի Օրտրրով, կամ Պանքայի չէքով։

ԴՐԱՄ ԿԸ ՓՈԽԱԴՐԵՆՔ

Ամերիկաբնակ հայ գաղթականութեան կուգամ յայտարարել որ հայրենիք դրամ փոխադրելու դիւրութիւն ընծայելու համար, փոխագրի նոր գործով սկսած եմ ի Պօսթօն՝ շատ մը բարեկաներու ու ծանօթ հայրենակիցներու թախանձանց գոյացում տալու։ աւելորդ է ոչինչ գովեստներ ընել Խարբերդի ինչպէս նաև Տիգրանակերտի մէջ հաստատուած Պէրպէրեան եղբարց տան վարկին ու վստայութեան նկատմամբ։ ինչ որ արդէն երկար տարիներէ ի վեր կըվայելեն, պէտք եղած վստահութիւնն ու վարկը գործի հրապարակի վրայ։ Գործը պիտի հաստատէ ու վըկայէ զայն, եւ այս համարձակութեամբ կերաշխաւորիմ ամէն անոնց, որք կուզեն Փ. գրի գործ ինձ հետ։ Օմ. Լ. $ 4,50 էն կուտանք։

Մասնաւոր գործակատարներ ունինք Խարբերդ, Մալաթիա, Տիգրանակերտ, Սեբաստիա, Հալէպ, Կ. Պոլիս և Մարսիլիա ինչպէս ուրիշ այլ և այլ քաղաքներ։ Մարսելիայէն եկողներու դրամի և այլ պէտքերու մասին խնամք և դիւրութեան միջոցներ կընձեռենք։ Հայաշատ քաղաքներու դիւրութիւն ընծայելու համար երկու գործակալներս կը նշանակեմ որոնց կրնան դիմել։—Ուստր. Պ. Գրիգոր Մարգարեան. 157 Սըմըր Սթ. Նիւ Եորքի և Նիւ Ճըրզիի Պ. Մարտիրոս Թաշճեան 251 Ուիլըմ Սթ. Նիւ Եորք

Ինձ նամակ և դրամ ղրկողներ պէտք է հետեւեալ հասցէով թղթակցին՝

P. O. Box 2652. *իսկ զիս անձամբ տեսնել ուզողներ կրնան դիմել՝*
344 Cambridge St.,
Boston, Mass.

ՅՈՎՀ. Մ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԱԶԴ

Կը ծանուցանենք Հայ հասարակութեան թէ՝ Պոսթոնի թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԷՆՆԵՐ ԶԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ։

Ցանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍՔԱՆԱԶ

Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Պոլսոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի և Տիկին Ռաֆֆիիհետ մասնաւոր կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուններէ ալ գըրքեր բերել տալու միջոցները ձեռք բերած ըլլալով՝ կուգամ գրասէր հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գըրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ՝ բերել տալու պատրաստ եմ։ քիչ ժամանակ վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրեանց շարք մը։

Փափաքողաց գրացուցակ կը ղրկենք։

Մեծ քանակութեամբ գընողներու՝ մասնաւոր զեղչ կընենք։

Դիմել Խ. ՊԵՏԻՇԵԱՆ
390 P O BoX
LOWELL MASS

ԱՆԱՀԻՏ

Հանդէս Ազգային, Գրական և Գեղարուեստական։ բացուած է Բրդ։տարուայ Բաժանորդագրութիւնը։

Հասցէ

ԱՐՇԱԿ ՁՕՊԱՆԵԱՆ

6 *Բլէս Տը Լ'Օտէօն* *Բարիզ*

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
ՄԵԾԱԲԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱԲԱՆԱԿ
Ս. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ

Նիւ-Եորք 509 2 *րդ։ Ավինիւ*

Տեղական և Արեւելեան բաղմատեսակ նպտրեղեններ, լաւագոյն տեսակ ընդեղեններ, եղանակին համեմատ բանջարեղեններ և առօրեայ թարմ միս։ Հայկական պանիրփաւունը 13 սէնթ մեծաքանակ գնողաց 11 սէնթ։ Ուստրի պատուական Պղլուր և Մեծած փաւունը 3 սէնթ մեծաքանակ գնորդաց համար 2, Զիթապտուղ (զէյթուն) փաւունը 10 ս։ մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղչ կընեմ, 5 փաւունտ քէն սալսայ հատը 25 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հատը։ Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ա՛ղը դրուած եափրաղ, ընտիր կորկոտ, անթապ հալվասի, կանոնչ զէյթուն։ Զէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մաքառոնի լօքումի տեսակներովը, ոսպ աղցուած կամ չաղցուած, սումախ, սիսեռ Պոլսոյ խաչար պանիր, լէպլէպի չաքարի տեսակներով, քիմիոն, անասոն, պատուական խունկ։ աղուոր ալիւրէ հաց 2 հատը 5 սէնթ, և այլն։։։։ Նամակով ե՛ղած յանձնարարութիւնք փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով։ վճարումները կանխիկ են և ոչ ապառիկ։

ԱԶԴ

Լին քաղաքի Պրուքվէյ փողոցի թիւ 24 ճաշարանս անձնական բանաւոր պատճառներու համար կը ծախեմ, 20 հատ պօրտրներ ունիմ, որոնք ամէնքն ալ կանխիկ վճարողներ են։ Ճաշարանի գործ ընել ուզողներու համար լաւ պատեհութիւն մը է այս։

Դիմել
Սարգիս Տ. Պողոսեան։
24 *Պրուքվիլ փողոց։ Լին։ Մէս։*